151 Հիսուսի սերը մեծ է, անսահման,

1. Հիսուսի սերը մեծ է, անսահման,
Առատ հոսում է հորդ գետի նման,
Ինչպես զեփյուռ շոյում է մեր հոգին.
Խորն է ու լայն՝ սերը աստվածային:

Իսկ եթե չլիներ այդ սերը,
Չէր լինի և մեզ փրկություն,
Սերն է հավերժ կյանքի հույսը,
Որ գամվեց խաչին ու թափեց արյուն:

2. Նա մեզ սիրեց՝ դեռ Իրեն չիմացած,
Սիրեց և Իրեն հակառակ մարդկանց,
Ովքեր «խաչե՛լ, խաչե՛լ» էին գոչում,
Բայց Նա այսօր բոլորին է կանչում:

3. Թե աշխարհի մարդիկ ա՛յս հասկանան՝
Աստծո սիրով է շնչում ամեն բան,
Կամ թե Աստված թողնի մեզ մի վայրկյան,
Բոլորս էլ անդարձ կերթանք կորստյան:

4. Արի՛ շուտով, Նա քեզ է սպասում,
Իր մեղմ ձայնով սրտիդ դուռն է թակում,
Քար սիրտդ բա՛ց, չլինի՝ ուշանաս,
Ձրի փրկության սիրուց ետ մնաս: